Ավետիք Իսահակյան

Դո՛ւ անցորդի պես քեզ միայն ըզգա

Դո՛ւ անցորդի պես քեզ միայն ըզգա՛,
Եվ որպես ճամփորդ այս երկրի վրրա.
Ազա՛տ հայացքով նայի՛ր ամենին,
Եվ անվերջ քայլիր քո անհայտ ուղին:
Սիրտըդ սրբազան վըշտով թաթախի՛ր,
Հեռավոր ափեր գընա՛, թափառի՛ր.
Անհագ որոնի՛ր մի վեհ ընկերի,
Սիրիր, բայց սիրուն մի՛ լինիր գերի.
Սիրի՛ր, բայց և թո՛ղ, և նորից գընա՛
Ազատ ու մենակ՝ աշխարհիս վրրա;
Եվ երազ մի վա՛ռ , շքեղ, սուրբ և վեհ
Այս հողի – երկրից հոգիդ թրռցնե. –
Կարոտով ձրգտիր աստղերին անշեջ
Եվ մեռի՛ր աստղե – ոլորտների մեջ …

1904